



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

03.07.2012 N _____

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Շնորհավորում եմ Սահմանադրության օրվա առիթով և բարեմաղթում, որ այս նշանակալի տոնն իրավամբ դառնա ժողովրդավարական արժեքների լավագույն խորհրդանիշն ու իր ցանկալի ներկայությամբ նպաստի այդ բացառիկ արժեքների շարունակական կատարելագործմանը:

Տոնական այս օրվա խորհրդով պետք է ընդգծել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առանցքային դերն ու կարևորությունը հայրենի պետականության կայացման բոլոր գործընթացներում:

Սահմանադրության օրվա կապակցությամբ հնչող տոնական շնորհավորանքներին զուգահեռ ցանկանանք, որ մեր ժողովուրդը մշտապես ապրի խաղաղ և բարեկեցիկ կյանքով:

Թո՛ղ որ, հայ ժողովրդի նորոյա պատմության էջերը նշանավորվեն հաջողություններով ու հաղթանակներով:

Հարգանքներով

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ